

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԹՈՒԱՆ ՄԵՅԷ ԵՒ ՅՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

ԹԻԻ 5

18 յունիսրի 1914

Իմ շատ սիրելի Ուսուցիչ,

Նախ՝ ընդունեցէ՛ք ցաւակցութիւններս ձեր յարգելի հօր մահուան առթիւ³³։ Երբ ձեր նամակն ստացայ, հիւանդ պտուկած էի։ Եւս առողջացայ, կի՛նս հիւանդացաւ, այնուհետեւ դարձեալ ես՝ երկրորդ անգամ։ Այս պատճառներով շատ ուշ եմ պատասխանում ձեր նամակին։

Շնորհակալ եմ իմ ստուգարանութիւնների մասին ձեր տուած բացատրութիւնների համար։ Բազմաթիւ բառեր եմ ստուգարանել, որոնք մեծ մասամբ պարսկական փոխառութիւններ են, սակայն չեմ ուզում չարաչահել ձեր ժամանակն ու բարութիւնը։ Երբ միասին կազմենք մեր ստուգարանական բառարանը, ինչպէս առաջարկեցիք եւ վերջնական պատասխանին ամէն օր սպասում եմ, այն ժամանակ կարող եմ ձեզ հաղորդել այդ բոլոր ստուգարանութիւնները եւ հարցնել ձեր կարծիքը։ Այժմ զործի անցնենք։

Արդեւ թառի վերաբերեալ Մատը երբեք չի տեսել, թէ հայերէնում ր է աւելացել. դա միջածանց է, որ զոյութիւն ունի ասորերէնում։ Միայն ձեր հեշտութեան համար էի ասում, որ այս բառը պէտք է փնտրել ասոր. akel— արմատի տակ, որտեղ տեսնում ենք նաեւ arkel—։ Յիշում էք, տասը տարի առաջ ձեզ մի անգամ զրեցի ասոր. arkel— բառի մասին, եւ դուք ինձ պատասխանեցիք, թէ այդպիսի բառ չկայ ասորերէնի բառարանում։ Պէտք է որոնել akel— արմատի տակ, որի նորածանցաւոր երկրորդական ձեւը arkel— է։ Եթէ մօտս ասորերէնի բառարան ունենայի, վճռականապէս համոզուելու համար ինքս կը փնտրէի այդ արմատը։ Մասին իրր իրաւունք տուող հայերէնի —ել—ն էր, որ վերջածանց է համարում, բայց ուրիշ տեղ չի հանդիպում։ Սակայն դեռ վերջերս յայտնաբերեցի բարբառային քֆարզ «ձիւնով արդեյափակուած» բառը, որն ի յայտ է բերում արզ արմատը։ Սրանով հարցն ամբողջովին վճռում է։

Առն

Եղեիկ, էջ 148. շատ լաւ վկայութիւն եւ օրինակ կը գտնէք «Մեկնու-

33 Մեյէի հայրը մահացել է 1913 թ. վերջերին։ Ի դէպ. մայրը մահացել է. երբ որդին 11 տարեկան է եղել։

Լատինական գրերով տառադարձուած շատ բառեր գուրկ եմ տարբերակիչ նշանակեալից՝ սպարանիս չունենալու պատճառով։

թիւն ստորոգութեանց Արիստոտելի» գրքում (Հրատ. Յ. Մանանդեանի, 1912, էջ 50), որտեղ ստուած է. «Առն եւ առն համանիշներ չեն, որովհետեւ մէկը ուղղական է ու նշանակում է «չիկերէ»³⁴, իսկ միւսը սեռական է ու նշանակում է «մարդ»։ Եթէ այդ դիրքն այժմ ձեռքի տակ չունէք, մէջբերումը կարող էք դնել «Հանդէս»ում, 1913, էջ 294—295։ Վրացերէնն ունի *arni* «մայրի ոչ-խար»։ Այս բառն արդի հայերէնի ոչ մի բարբառում պահպանուած չէ։

Ձեզ յայտնի է արդեօք բժիշկ Թիրեաքեանի կարևորակը, որ 1907 թ. լոյս տեսաւ Փարիզում Կ. Բամաջեանի տպարանում։ Այդ գրքում կան բազմաթիւ ստուգարանութիւններ, որոնք արժեքաւորիկ են։ Սակայն տասը բառաւորանութիւն հաւանաբար ճիշտ են։ Դրանք պահպանական փոխառութիւններ են։ *Karnamak*—ում հեղինակը գտել է նոր բառեր կամ լաւ ընթերցումներ, որոնցով բացատրում են հայերէն այդ տասը բառերը։ Բայց քանի որ նա պահպանելն բառերը պահպանական տառերով կամ երոպական տառադարձութեամբ չի դրել, ուստի դժուար է իմանալ այդ բառերի ստույգ արտասանութիւնը։ Նրա տառադարձումները հայերէն տառերով են, Աստուած գիտէ՝ ըստ հիշ, թէ արդի հայերէնի։ Խնդրում եմ դրանք ստուգել Նյուլտեֆէր թարգմանութեան մէջ (*Karnamak*, *Artasir*, *Babakan*)։

Այսօր այդ տասը բառերից մէջ եմ բերում երկու լաւ ստուգարանութիւն, մի ուրիշ անգամ կը ստուգենք միւս ութը։

Գէտ եւ գուշակ «*vates, propheta*». *զլ. ԺԵ*, 1—5ում հանդիպում է միայն գէտ բառը, սակայն *զլ. ԺԵ*, 2ում ունենք գէտ եւ գուշակ միասին։ Նյուլտեֆէն կարծում է, թէ գէտը հնդկերէն յատուկ անուն է. Թիրեաքեանն այն թարգմանում է «*vates*». գուշակ բառը ցոյց է տալիս, որ նա իրաւացի է։ Նյուլտեֆէն այս վերջին բառը կարդում է գւշակ, որովհետեւ պահ. 1 = u, n: Հետաքրքրական է. բայց հարցը մնում է համար հարկաւոր է տեսնել պահպանական ձևեր։

Վերմակը հանդիպում է *զլ. ԺԵ*, 1ում՝ «նա մտաւ Խորասանի վերմակի մէջ» (այսինքն՝ խորասանցու պէս հագնուեց)։ Ո՞րն է պահպանական սկզբնաձևը եւ կարո՞ղ է տալ արդեօք հայ. վերմակ։

Ուզում էի *MSL*-ին մի յօդուած ուղարկել ազմուի եւ մի քանի այլ բառերի վերաբերեալ, սակայն ժամանակ չեմ գտնում. ամբողջովին կլանուած եմ իմ Բառարանով³⁵։

Խնդրում եմ՝ ինձ ասէք, թէ ըստ ձեզ հնարաւոր են արդեօք հետեւեալ համեմատութիւնները. Թոխար. *B ynucai* «գնալ» եւ հայ. գնալ. Թոխար. *B ynucaih* տալիս է Թոխար. *A *vnucai* եւ հայ. գնալ < **vnał*։

Ի՞նչ է ձեր կարծիքը ապաւէն բառի մասին. մի տեղ դուայ դրա համեմատութիւնը *apa + van*ի հետ. հմմտ. սանսկր. *van*, *vanati* «պահել, պահպանել», *գենդ. avanh*, *avara*, *van*, սանսկր. *avas* «մէկին պահել, խնամել», *հ. պարսկ. paitiyavahaiy* «սատարող խնդրեցի»։

Եղծանել բառի մասին այսպէս մտածեցի. ե—ն դ—ի պատճառով դրբուած նախաջաւելում է։ Նկատելի է, որ լ—ով սկսուող մի քանի բառեր ունեն եզ—ով երկրորդական ձևեր. *այսպէս՝* լինիմ—եղանիմ, լերկ—նղորկ։ Այնուհետեւ դուայ, որ հայ. —ոյ—ն կարող է ունենալ նաեւ —ու— ձևը. *այսպէս՝* մոյծ—մուտ, բոյծ—բուտ, ինչպէս նաեւ լոյծ—լուծ, որից *լծանեմ > եղ-

³⁴ Վայրի արու ոչխար։

³⁵ Հայերէն յարմատական բառարան, որ սկսեց յանդարտուի լոյս տեսնել 1926-ին Երեւանում։

ծանկնմ: Ստեփան Երանցի մի սխալ կայ, որ չէի նկատել. բուս, մուս ձևերը որպէս արժատ գոյութիւն ունեն, իսկ լուծ—ը գոյութիւն չունի, եւ նրա արժատն է եղծ եւ ոչ թէ *եղուծ կամ *լուծ: Ուստի այս ստուգարանութիւնը մի կողմ եւ թողնում որպէս ամբողջովին սխալ:

Ինչպէս գիտէք, Հայերէն բարբառների մի բառարան ունէի, որ արժանացաւ Քանանեան մրցանակին (2,000 Ֆրանկ): Կնոջս ընդօրինակած եւ իմ չրփերանայած ձեռագիրը Լազարեան ձեռարանում էր: ձեռարանի տնօրէնը՝ այդ ապուշ Կոստանեանը, առանց ինձ տեղեկացնելու տպագրել է բառարանը, եւ մի գեղեցիկ օր այն ստացայ բոլոր վրիպակներով, որոնք կարող են սպրդած լինել չմերանայած եւ չորրադրուած փորձնական մամուլների մէջ: Գիրքը երկուսն 1200 էջոց ստուար հատոր է եւ տպարանկում է 30,000 բառ³⁶: ձեռարանը, կարծեմ, մի օրինակ ուղարկելու է ձեզ: Եթէ ստաջիկայ մի քանի չարախոսմ չուղարկեն, կարող եմ հարկուրի չափ իմ օրինակներից մէկը նուիրել ձեզ:

Ձեր անձնուէր աշակերտ՝

Հ. Աճառեան

ԹԻԻ 6

26 յունիսի 1926

Երևան

Իմ շատ սիրելի Ուսուցիչ,

Կէօթներէց³⁷ ստացայ Թրատութմանի³⁸ եւ Պեռնեքերի³⁹ բառարանները: Օգտագործման տեսակէտից տաջիէր շատ անյարմար գիրք է: Նախ՝ տպագրուած է գոթական տառերով, երկրորդ՝ բառարմատները զլխագրերով տպագրուած չլինելու պատճառով լաւ տեսանելի չեն: Երկրորդ՝ չունի բառացանկ: Իսկ Պեռնեքերի բառարանի վերաբերեալ պէտք է տեսլ, որ միայն առաջին հատորն ստացայ, երկրորդը լոյս չտեսաւ արդեօք⁴⁰: Այս մասին զրբեցի Կէօթներին, բայց՝ ոչ մի պատասխան: Նրանից խնդրեցի նաեւ, որ ուղարկի Սոֆոքլեսի գործերը, թեկուզ 50 ռուբլով=25 դոլլար: Ոչ մի պատասխան:

Կէօթներն ինձանից ուզում է Թրատութմանի եւ Պեռնեքերի բառարանների արժէքը, մինչդեռ դուք գրում էք, թէ դա մտնում է ձեզ ուղարկած փողի մէջ:

36 «Հայերէն գաւառական բառարան», Թիֆլիս, 1913 (Լեմինեան ազգագրական ժողովածու, հատ. Թ):

37 «Librairie Geuthner», փարիզում յայտնի է իբրեւ գիտական գրքերի մեծ գրախանութ: Գոյութիւն ունի մինչեւ օրս:

38 R. Trautmann, Baltisch-slawisches Wörterbuch (Ռ. Թրատութման, «Բալթիկ—սլաւոնական բառարան»), Կէօթիկեն, 1923:

39 E. Berner, Slawisches etymologisches Wörterbuch («Սլաւոնական ստուգարանական բառարան»), Բեռլին, 1909—1914 թթ.:

40 Պեռնեքերի բառարանից լոյս է տեսել միայն մէկ հատոր:

Խնդրում եմ՝ ինձ ուղարկէք ձեզ առաջուած փողի հաշիւը, որովհետեւ այն պէտք է ներկայացնեմ Համալսարանի տնօրինութեանը՝ գրեթէ մի քանիսը Համալսարանի համար են :

Շամիրիտնի⁴¹ առաջարկած դումարն այնքան փոքր է, որ նախընտրում եմ այդ մասին նոյնիսկ չգրել։ Նա ինձ առաջարկում է Լեզուաբանական բնականութեան տեղեկագրերը, որ արդէն ունեմ :

Երկու շաբաթ առաջ ձեզ երկու պրակ եւս ուղարկեցի իմ Բառարանից⁴², եւ այսպէս ամէն երկու ամիս միշտ երկու պրակ (200 էջ) կը ստանաք :

Իմ Բառարանը թարգմանելու ձեր առաջարկը մեծ հաճոյք պատճառեց ինձ. դա այնպիսի քաջալերանք է, որ ես չէի համարձակուի ակնկալել։ Ձեր առաջարկը յայտնեցի իմ բարեկամներից մի քանիսին, եւ «*Արհրհրդային Հայաստան*» օրաթերթը տպագրեց⁴³։ Թիֆլիսի ուսուերէն լեզուով պաշտօնական մի թերթ՝ «*Զարեա Վաստկա*», ձեր առաջարկի մասին աւելի տեղեկութիւններ ստանալու համար ինձ մօտ ուղարկեց իր թղթակիցներից մէկին։ Ես նրան տասցի ինչ որ դիտէի, այսինքն՝ այն ամէնը, ինչ որ ինձ գրել էիք։ Այդ թերթում եւս յոյս տեսաւ մի հաղորդում⁴⁴, որ եւ արտասուեցին Ռուսաստանի ուրիշ թերթեր։ Այդ հաղորդումների առաւելութիւնն այն եղաւ, որ բաժանորդներ թիւն անմիջապէս աւելացաւ, եւ համալսարանն⁴⁵ ինձ վերջնականապէս առաջարկեց իրեն վաճառել իմ Բառարանը։ Վաճառեցի 9,000 ուրլով, որ աւելի քան 160,000 Փրանկ է։ Սակայն վաճառեցի նաեւ հեղինակային իրաւունքս. ուստի եթէ իրօք ուզում էք Փրանսերէն թարգմանել իմ Բառարանը, պէտք է գիտէք համալսարանի տնօրինութեանը (եթէ ուզում էք՝ իմ միջոցով)⁴⁶։

Երկու տարի առաջ մի յօդուած էի ուղարկել, որի մէջ ստուգարանում էին ասորերէնից փոխ առնուած հայերէն յիսուն բառ։ Դուք ժամանակին ստացել էիք եւ տուել “*Mémoires*” ում տպագրելու ձեր հաւանութիւնը։ Ինչպէս տեսնում եմ, յօդուածը կորել է։ Սակայն մի՛ մոռնո՞ղուէք, որովհետեւ յօդուածն այլեւս աւելորդ է. այդ բոլոր ստուգարանութիւնները մտել են Բա-

41 Ֆրանսիայում յայտնի գրախանութ։

42 «Հայերէն արմատական բառարան»ից, որ հենց Հ. Անտոնանի ձեռագրով խմբարտիպ լոյս էր տեսնում պրակներով։

43 Հաղորդումը, որ հետեւեալն է, լոյս է տեսել «*Խորհրդային Հայաստան*» բերրի 1926 թ. յունիսի 9ի համարում (No. 134). «Լոյս տեսաւ Հ. Անտոնանի *Հայերէն արմատական բառարանի* երկրորդ ապակետիպ պրակը։ Մեյէն դիմել է Հ. Անտոնանին եւ բոլորտուրիւն խնդրել նրա արմատական բառարանը համառօտած ձեւով թարգմանելու փրանսերէն»։

44 «*Զարեայ Վաստկա*» բերրի հաղորդումը լոյս է տեսել 1926 թ. յունիսի 10ին (No. 1197). «Եւրոպացի յայտնի լեզուաբան Մեյէն դիմել է Հայկական համալսարանի պրոֆեսոր Անտոնանին՝ *Հայերէն արմատական բառարանի* հեղինակին, խնդրելով, որ իրեն բոլորտուրի կրնատուած ձեւով փրանսերէն հրատարակել այս կոյրդային աշխատութիւնը» (Զարեա Վաստկա, 10 յունիս 1926)։

45 Երեւանի պետական համալսարանը։

46 Այս գործի հետագայ ընթացքը՝ Մեյէնի եւ Երեւանի պետական համալսարանի միջեւ՝ մեզ յայտնի չէ։ Սակայն ստոյգ է, որ լեզուաբանական գիտութեան համար «Հայերէն արմատական բառարան»ը շատ արժեքաւոր համարելով՝ Մեյէն կեանքի վերջին տարին, երբ զրկուած էր տեսողութիւնից եւ շարժելու կարողութիւնից, իր աշակերտ հայագէտ Լուի Մարիեսի հետ աշխատել է փրանսերէն լեզուով համառօտել այն։ Սակայն մահը խանգարել է նրան։

ոտարանիս մէջ (տաղինն als է, տե՛ս էջ 163):

Մեր Համալսարանի տնօրինութիւնը ձեռք խնդրում է, որ բարեհաճէք (Փրանսերէն լեզուով) յօդուած ուղարկել իր Տեղեկագրին, որ մամուլի տակ է: Ինձ նոյնիսկ ասացին, որ լաւ կը լինի, եթէ իմ Բառարանի մասին զբախօսութիւն ուղարկէք, որ ևս հայերէնի կը թարգմանեմ: Սակայն ընտրութիւնը թողնուած է ձեռք: Կարող էք զրել ինչի՞ մասին որ ցանկանաք⁴⁷:

Հայ մատենագրութեան մէջ Պատմոսից երկու էջ դտայ, որոնք չկան յունարէն բնագրում: Համալսարանն ինձ խնդրեց, որպէսզի այս մասին հաղորդեմ «Bulletin»-ում⁴⁸ [...] ⁴⁹:

ԹԻԻ 7

10 յուլիսի 1926

Երեւան

[...] ⁵⁰ Քաղոց ամսուան իմ վերջերս յայտնաբերած ստուգարանութեան հիման վրայ ի յայտ բերեցի հայկական տարուայ կազմաւորման թուականը, որ Ք. ա. երկրորդ դարից է: Չեղ չատ եմ խնդրում՝ ինձ յայտնէք աւստրիական թուր անունները հին պարսկերէնով և Աւետայի լեզուով՝ ըստ հերթականութեան և, եթէ հնարաւոր է, յունա—հռոմէական համապատասխաններով: Ինձ չատ են հարկաւոր: Մի աշխատանք եմ պատրաստում մեր ինստիտուտի համար:

«Revue des études arméniennes»-ում («Հայագիտական հանդէս»-ում) կարդացի ձեր ստուգարանութիւնը երկար բառի մասին⁵¹: Չէ՞նք կարող ենթադրել, թէ երկին բառը ևս կարող է ծագել *dev, *deva, *divine և այլն ձևից: Դրանց համապատասխանութիւնը կը լինի նոյնը, ինչ որ տեւել—երկար, տիւ—երկին ձևերինը: Խնդրում եմ՝ ինձ գրէք ձեր կարծիքն այս մասին: Ես այն կը մտցնեմ Բառարանիս մէջ, որտեղ, ինչպէս տեսնում էք, միշտ նշում եմ ձեր կարծիքը, եթէ ինձ յայտնի է:

Օգոստոսի 1ին մեկնելու եմ Պետերբուրգ, որտեղ աշխատելու եմ գրադարանում. թերթելու եմ Լեռնական թուր հանդէսները, որ ցարդ չեմ

47 Մեյէն յօդուած չի հրատարակել Երեւանի պետական համալսարանի Տեղեկագրում, իսկ «Հայերէն արմատական բառարան»ի վերաբերեալ նրա գրախօսութիւնները լայս են տեսել Եւրոպական մամուլում:

48 Bulletin de la Société de linguistique de Paris, յապաւում՝ BSL կամ B. S. L., փաբիգի Լեզուաբանական ընկերութեան լրաբերը:

49 Նամակն այստեղ ընդհատում է առանց ստորագրութեան. պակասում է շարունակութիւնը: Ստորեւ տպագրուող Տրգ նամակում, որ հաւանաբար 1926ի այս նամակից յետոյ է գրուած, Հ. Անտանան անկի մանրամասն է հաղորդել Պատմոսի յունարէն բնագրում պակասող, սակայն հայ մատենագրութեան մէջ պահպանուած էջերի մասին. «Պատմոսի Օրէնքները կարդալիս, էջ 14. Մագիստրոսի բարգմանութեան մէջ (ժվ դար) նկատեցի, որ յունարէն բնագրում մէկ էջ պակասում է (տե՛ս Platonis opera, Փաբիգ, 1883, էջ 269)....»:

50 Պակասում է նամակի սկիզբը. պահպանուած է երկու երեսը գրուած մէկ քերք:

51 Երակաբ բառի ստուգաբանութիւնը Մեյէն հրատարակել է «Revue des études arméniennes» հայագիտական հանդէսում, հտ. Դ, 1924, էջ 1—6:

կարողացել տեսնել: Դրանք զնեղը ինձ չառ թանկ կը նստէր: Կը վերադառնամ սեպտեմբերի 1ին:

Ձեր անձնուէր աշակերտ՝

Հ. Աճառեան

ԹԻԻ 8

[Անքուակիր]⁵²

Իմ չառ թանկագին Ուսուցիչ,

Սպասում էի, որ Փարիզ վերադառնալիք, որպէսզի կարողանայի ձեզ գրել եւ ուղարկել Բառարանիս⁵³ պրակները:

Յիլի բառի համար կայ՝

1) նախ Տէրմիններու ստուգարանութիւնը հայ. «Մասիւ» թերթում, 1881, մայիսի 5, եւ նրա «Հնդեւ. նախալեզու»ում, էջ 92, 127, < հնդեւ. plé — «լցնել»:

2) Փետերսեն, «Հայերէն եւ գրացի լեզ.», էջ 195, < հայ. ուղի «Ճանապարհ», որն իբր նախապէս նշանակել է «փոր», հմմտ. լատ. alvus, alveus:

3) Անցեալում ձեզ հաղորդեցի Տէրմիններու ստուգարանութիւնը: Ասացիք, թէ հնարաւոր է ենթադրել *peleu—iyō—, որպէսզի բացատրենք դ—ն, որը, բոլոր փետերսենի, ծագում է —ln—ից:

Իմ կարծիքով՝ ոչ ոք չի առաջարկել այն ստուգարանութիւնը, որ դուք էք առաջարկելու:

Սակայն ճիշտ է արդեօք ասել, թէ դ—ն միշտ ծագում է —ln—ից: Այդ գէտքում ի՞նչ են աղալ եւ չառ ուրիշ բառեր:

Ուլ (< *polo) ի մասին.

1) նախ Պատրուբանին է առաջարկել այն ստուգարանութիւնը (SA 2, 163), այնուհետեւ՝ եւ, «Արարատ»ում (1912, 838). ապա դուք՝ MSL—ում (22, 55), եւ վերջապէս՝ Մատենոյք (KZ, 50, 1933, էջ 54—55):

2) Նիտերման (BB 25, 1899, 85), լատ. inuleus, յուն. ἰνύλος < *oplos:

⁵² Այս նամակն անքուակիր է, բայց հաւանաբար 1929—1930 թթ. է. ֆանի որ Մեյն 1930 թ. է լոյս ընծայել յղե բառի ստուգարանութիւնը (REA, հատ. Ժ, 1930, էջ 183—184). որի մասին Հ. Աճառեանը այս նամակում ստուգարանական տեղեկութիւններ է տալիս Մեյնին: Բացի այդ, «Հայերէն արմատական բառարան»ում յղե բառի ստուգարանութեան պատմութեան մասին կարդում եմք *Meillet (ամմակայն) վարանում է ընդունել վերի մեկնութիւնը՝ զ ձայնի պատճառով, որ բացատրելու համար ենթադրում է հնիս. pelan-iyō. Իսկ այժմ (նամակ 5 հոկտ. 1930) դնում է հնիս. polo— «ձագ» բառից, որից եւ կյ. ուլ, բացասականը՝ ամուլ < *ան—մուլ «անձագ», որով եւ յղե՝ բուն չուլով, ձագով»:

⁵³ «Հայերէն արմատական բառարան»ի, որ Մեյնէն հեղինակից ստացել է պրակ առ պրակ, ինչպէս լոյս էր տեսնում:

3) *Լիակն* (*Arm. Stud.*, 25), *լաւ. als*, *գոթ. alan*, *հ. խոլ. alim*, *մաւ. անանդ. րաւ. sub—ol—as, proles*:

Ձեզ ահա ներկայացնում եմ մի շարք դիտողութիւններ եւ խնդրում եմ ինձ յայտնէք ձեր կարծիքը:

Սերաստիայում օձ բառն արտասանելիս Հայերն անմիջապէս աւելացնում են չրթունքների շաշին: Շրթունքների շաշինը այլ դէպքերում օգտաւորութեամբ է անասուններին (օրինակ՝ ձի կամ էջ) քշելու համար, իսկ այս դէպքում շաշինը գործ է ածւում օձին վնասելու համար, եթէ նա մտադիր է դալ իր անունը տուող մարդու մօտ: Սա քապուլի մի նոր տեսակ է⁵⁴:

Հայերէնում ունենք կարիք եւ կոր բառերը, որոնք նշանակում են «կարիճ»: Քանի որ հայերէնում գոյութիւն ունի —իք (հաղուաղէպ) վերջածանցը, Լակարաբ կարծել է, թէ կարիքը կազմուած է կար+իք: Եւ իմ Բառարանում սխալուել եմ՝ որոշ չափով իրաւունք տալով Լակարաբին, նկատելով, որ հայերէնում կայ նաեւ կոր «կարիճ», որից թերեւս կարիք: Սակայն հիմա վստահ եմ, որ կորը ոչ մի կապ չունի կարիքի հետ, եւ որ կորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հայ. կոր «ծուռ» բառը: Պարսկերէնում կարիճը կոչւում է *kaz—dum*, որ նշանակում է «ծուռ—պոչ»: Հայերէնի բարբառներում նոյնպէս ունենք կեռ—պոչ, կռահակի «կարիճ» (ծուռ—պոչ): Սա մի քապուլ է՝ կարիճի անունը շտապու համար⁵⁵:

Սակայն Ձմեկածագի բարբառում աւելում է կորչ «կարիճ» փոխանակ կոր տակու: Բառափնջում այս չ—ն հենց Սերաստիայի Հայերի չրթունքների շաշինն է: (Անասուններին քշելու համար ասում են չո՛ւ):

Պղատոնի Օրէնքները կարդալիս, էջ 14, Մաղիսարոսի Թարգմանութեան մէջ (ԺԱ. դար) նկատեցի, որ յունարէն բնագրում մէկ էջ պակասում է (տե՛ս *Platonis opera*, Փարիզ, 1883, II, էջ 269): Այս կորած մասում կայ *mak—dalinay* (մակդաղիայ) բառը, որին հանդիպեցի *Baillys* մօտ եւ միակ վկայութիւնը Գաղիանոսից է: Ձեզ խնդրում եմ, որ կարդաք իմ Բառարանի⁵⁶ մակդաղիայ բառափոխածը եւ որեւէ հանդէսում հաղորդէք այն լուրը, թէ հայերէնում [...] ⁵⁷:

54 Հ. Անտեանի «Լիակատար քերականութիւն հայոց լեզուի» բազմաթիւ արժանատի քննադատական «նեքածութիւն» հատորում, էջ 121, այս հարցի մասին կարդում եմ. «Սերաստիայում օձ բառը արտասանելուց յետոյ պէտք է իսկոյն եւեթ արտաբերել նաեւ չ՛փ... բացառապէս իւր, որով անասուններն են բշտում կամ վարում: Իբր թէ օձ ասելիս օձը իսկոյն կգայ. իսկ չ՛փ... բացառապէս իւր լսելով նորից կը հեռանայ»:

55 Նոյնպէս Լիակատար քերականութեան «նեքածութիւն» հատորում, էջ 121—122, կարդում եմ. «Հայերէնի որոշ տեղեր կարճ բառը ջնջուած է. Ղրբ. ասում են *կորհաբէ*, Ակն՝ *կոր*, որոնք կազմուած բառեր են: Այսպէս նաեւ պարս. *kaz—dum*, որ է՝ «ծուռ պոչ»: Հաւատում էի, որ եթէ այս բառերի փոխարէն մէկը բուն անունը տար, միշտապէս վրայ կը հասնէր եւ կը խայրէր: Յիշեցնեմ, որ «Հայերէն արմատական բառարանում» հեղինակը կարճ բառի ստուգաբանութեան մասին գրել է հետեւալը. «...*Lag. Arm. Stud.*, § 1127, արմատը դնում է *կար*, իսկ իճ մասնիկ: (Իբոք որ բառիս հոմանիշն է *կոր* (տե՛ս այս բառը), ուստի քերեւս արմատն է *կար*. մասնիկի համար հմմտ. *ուտիճ*, *լուիճ*, *աղաւիճ*)»:

56 «Հայերէն արմատական բառարան»:

57 Այս նամակի շարունակութիւնը չի պահպանուել Մեյիի բոլորում: Կարծում եմ, որ այնտեղ ասուած պիտի լինէր այն, ինչ կարդում եմ «Հայերէն արմատական բառարանում» մակդաղիայ բառի ստուգաբանութեան վերաբերեալ, որ Հ. Անտեանին է պատկա-

21 նոյեմբերի 1931

Երևան

Պարոն եւ իմ շատ սիրելի Ուսուցիչ,

Վեց ամիս է, որ ձեզանից լուր չունեմ: Մի քանի բառի մասին բացատրութիւն էի խնդրել եւ պատասխանի էի սպասում: Թերեւս նամակս կորել է:

Ահա վերջացրի բառարանիս և հատորը եւ սկսում եմ վերջինը (Անտառեր): Գուցէ ուշ չի լինի, եթէ ձեզ խնդրեմ, որ ինձ լուսարանէք Սոսկուց մի քանի բառի ստուգաբանութեան վերաբերեալ:

ՍԱՐԻՔ: «Հանդոյց, չղթայ», Հնդեւ. *ker—, սանսկր. crn—kha—la եւ այլն, Փոքոսնի—Վարտէ, Հտ. Ա, էջ 409:

ՍԱՐԵԱԿ «մի տեսակ թռչուն» < Հնդեւ. *ker, *kor, *kr, սանսկր. cari— «մի տեսակ թռչուն» եւ այլն, Փոքոսնի—Վարտէ, Հտ. Ա, էջ 414: Ինձ հարկաւոր է խմանալ ձեր կարծիքը՝ հայերէն բառը փոխառութիւն է պարսկերէնից, թէ ընդհակառակը հայերէն բառ է:

ՍԱԳ «սաղ», Հնդեւ. *k' aua (սուս. coua, Հ. վ. գերմ. huwo, լատ. cavannus) եւ այլն: Սա Լիտէնի բացատրութիւնն է, Arm. St., էջ 80=Փոքոսնի—Վարտէ, Հտ. Ա, էջ 332:

ՍԱՔ «նետ», սանսկր. cula— «նիզակ, բեր» եւ այլն, Փոքոսնի—Վարտէ, Հտ. Ա, էջ 33:

ՍՏՈՐ «ցածր» = լատ. post, posterior եւ այլն, Փոքոսնի—Վարտէ, Հտ. Բ, էջ 79:

ՍԱՆԴՈՒՂ կամ ՍԱՆԴՈՒԽ «սանդուղք» (կարծում եմ, որ սէտք է սանդուղ—ը համարել Հնդգոյն ձեւը, —ուղ—ը վերջածանց է). Հնդեւ. *sqand «բարձրանալ» արժատից, լատ. scando, scala եւ այլն, Փոքոսնի—Վարտէ, Հտ. Բ, էջ 541: Բացատրութիւնը իմն է:

ՍՊՈՒՆԳ—ը «սպունդ», 𐎱𐎠𐎼𐎿 փոխառութիւն էք համարում, թէ ընդհակառակը, եւ ի՞նչ կապ ունի սունկ—ի «սունկ» հետ (Վարտէ—Փոքոսնի, Հտ. Բ, էջ 681):

ՍՐՍԿԵԼ «սրսկել, ջուր ցանել», Հնդեւ. sresq— «կաթել» = գենդ. srask— եւ այլն (Վարտէ—Փոքոսնի, Հտ. Բ, էջ 705): Հայերէն բառը փոխառութիւն է, թէ ընդհակառակը: Հիւսկմանը դրում է. «Քանի որ պարսկերէնն ունի se-risk, իսկ հայերէնը՝ սկ, ուստի այն չի կարող փոխառութիւն լինել»: Սակայն

նում. «Մակդագիայ մի տեսակ յունական կերակուր». նորագիտ բառ, որ մէկ անգամ զբնում եմ գործածուած Պատմ. Օրին. 14. «Զի ժակդագիայ» որ է կերակուր ինչ նարայ, իւրաքանչիւր ոք բերէր»:

Յուն. μαγδαλά ըստ Bailly նշ. «խմորի զանգուած» եւ վկայում է Գալիսնոս բժշկից (131—203 յ. Գ.). Պատմեմի այս հատուածը՝ որ յունարէնի մէջ կորած է, բայց պահպանուած հայերէն բարգմանութեան մէջ (Platonis opera, Փարիզ, 1883, հտ. Բ, էջ 269), տալիս է մեզ վեց դար անելի ելին վկայութիւն յունարէն բառի համար եւ մի քիչ տարբեր ընշանակութեամբ: — Աճ.՝:

սրսկապան «քօղ» բառը, որ մեշտ սկ ունի, պէտք է փոխ առուած լինի պարսկ. siriskan «քօղ» բառից: Սրսկելը եւս կարելի է փոխառեալ համարել, թէեւ ունի սկ, փոխանակ շկ—ի:

ՍՈՎ. պահլաւերէնում գտնում ենք sog «քաղց» եւ մանիքլական պահլաւերէնում soig «քաղցած»: Հայերէն բառը համարում եմ պահլաւական փոխառութիւն:

ՍՐԻՆԳ, յուն. $\Sigma\rho\iota\gamma\acute{\epsilon}\varsigma$: Իմ պաշտօնակիցներէրց մէկն արեց հետեւեալ դիտողութիւնը. յունստէն բառն ամբողջովին չի ծածկում հայերէն ձեւը: Յոյների մօտ կար հետեւեալ առասպելը. $\Sigma\rho\iota\gamma\acute{\epsilon}\varsigma$ -ն փոխառացի երիտասարդ մի աղջիկ էր: Ափոլլոնը սիրահարուած է նրան եւ ուղում է բռնել: Աղջիկը փախչում է: Ափոլլոնը հետապնդում է նրան, եւ երբ փոխառացի աղջիկը տեսնում է, որ բռնուելու է, կոնդ է առնում եւ եղէդ դառնում: Ափոլլոնը քաղում է եւ դէզը եւ դրանից սրինդ պատրաստում: Այս առասպելը ցոյց է տալիս, որ սրբինդը ($\Sigma\rho\iota\gamma\acute{\epsilon}\varsigma$) փոխառական ծագում ունի, եւ հայերէն ու յունարէն համապատասխան բառերը փոխառութիւններ են փոխառւելից: Այս առասպելն իրօք գոյութիւն ունի՝ արդեօք Յոյների մօտ, ո՞վ է այն յիշատակել, եւ դուք կարծո՞ւմ էք, թէ այդ երկու բառերը փոխառական փոխառութիւններ են:

ՕՂ=ԱԻՂ «չրջանակ, օղ եւ այլն, կլորակ եւ մէջտեղում անցք ունեցող առարկայ» յուն. $\alpha\iota\lambda\acute{\iota}\varsigma$ հ. սլաւ. ulica, լիտվ. aulys, լատիշ. ula եւ այլն, հնդեւ. *aulos, որի *ul— ձեւը տալիս է հայ. ուղի «ճանապարհ»:

ՕՐ=ԱԻՐ «օր», սանսկր. ustra «առաւօտ», յուն. $\alpha\upsilon\tau\acute{\rho}\rho\varsigma$ հ. վ. դերմ. ostara, հ. իսլ. austr, լիտ. austra < *austra «արշալոյս»:

ՀՈՎԻԻ. Իմ Բառարանում գրել եմ հնդեւ. $\textcircled{\text{ov}}\text{—pa}$: Չէ՞ք կարծում, թէ աւելի լաւ կը լինէր զնել $\textcircled{\text{av}}\text{—pa}$ «հօտաղ»: Այն ժամանակ h—ն կը բացատրուէր:

Ինձ ասացին, թէ դուք լատիներէնի ստուգաբանական բառարան էք հրատարակել⁵⁸: Եթէ ստոյգ է, խնդրում եմ՝ ինձ տաք ճիշտ վերնագիրը, որ պէսպիսի անգիրքից բերել տամ:

Լեզուաբանական ընկերութեան «Bulletin»-ի վերջին պրակը շատ հետաքրքրական էր հնդեւրոպական լեզուների ժամանակագրութեան վերաբերող ձեւ յօդուածի շնորհիւ⁵⁹: Դեռ երկա՞ր պէտք է սպասենք ձեւ ներածութեան⁶⁰ նոր հրատարակութեանը, որի մէջ շատ հետաքրքրական կը լինի տեսնել իսկ թերէնի բացատրութիւնը:

«Bulletin»-ի 90 եւ 91 համարները չեմ ստացել: Խնդրում եմ, բարեհաճէք դրանք ուղարկել տալ ինձ: Իմ հասցէն էլ փոխուեց: Քանի որ այլեւս դասեր չունեմ համալսարանում, որ դարձել է «Ազրո—ինդուստրիալ դպրոց»,

58 «Dictionnaire étymologique de la langue latine» (Հատիկներէն լեզուի ստուգաբանական բառարան). Մեյէն այն կազմել է իր մաթիկին աշակերտ Է. Էռնուի հետ, Փարիզ, 1932:

59 Հ. Աճառեանը մկատի ունի Մեյէի «Essai de chronologie des langues indo-européennes» («Հնդեւրոպական լեզուների ժամանակագրութեան փորձ») յօդուածը, BSL, հտ. ԼԲ, 1931, էջ 1—20:

60 Դա Մեյէի «Introduction a l'étude comparative des langues indo-européennes» («Հնդեւրոպական լեզուների համեմատական ուսումնասիրութեան ներածութիւն») շատ արժէքաւոր աշխատութիւնն է, որի 7րդ քարեփոխում հրատարակութիւնը լոյս է տեսել 1934 թ. Փարիզում:

խնդրում եմ ինձ դրել հետեւեալ հասցէով՝ Հ. Անտոնեան, Արուիեան փ., քիւ.
85, Երեւան, Հայաստան:

Մի ուրիշ ստուգարանութիւն.

Իմ Բառարանում (տե՛ս խրախ) բացատրել եմ, որ հ—ով սկսուող եւ
խ—ով վերջաւորուող բառերի հ—ն փոխւում է խ—ի՝ հրասախ > խրասախ,
հարքուխ > խարքուխ: Նոյնպէս եւ խուխ—ը «թուք, խորխ» նախկինում պէտք
է եղած լինէր *հուխ. այդ դէպքում այս բառը կարելի՞ է համեմատել լատ.
sucus, լիտվ. sunkiu (նոյն նշանակութեամբ), հնդկ. *suq ձեւերի հետ:

Հաճեցէ՛ք ընդունել, իմ յոյժ սիրելի Ուսուցիչ, յարգանքիս հաւատա-
տիրքը:

Ձեր անձնուէր աշակերտ՝

Հ. Աճառեան

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Երուսաղէմ

Շաբ. եւ վերջ

